


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԵՆ ԹՈՐՈՏՍԻԱՆ

Եւամանկ կամ որ եւ է
գրողութիւն պէտք է ուղղել առ
Տնօրին. ԱՐՇԱՒՈՅ յրազրի
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրամակն.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԷՆԵՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԳՂԱՆԻԿ
ԵՆ ԹՂԹԱՌԱՐԻ ԺԱԽՔԸ
ԽՆՔԱԳՐՈՒՄԵԱՆ ՎՐԱՅ Է:

ԽՆՔԱԳՐՈՒՄԵԱՆ ՈՂՈՂՈՎԱԾ
ԳՐՈՒՄԻՆՔ ԵՆ ՀՆԵՆ ՏՐԱԽՐ

Ա.ՉԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի են

B. TOROSSIAN
Directeur du journal arménien
ARCHALOUICE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԽՊԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՏԱՊԱՀՄԱՆԻ Պատ. բաժնա-

ճարտարական յետնապես կը խնդրուի որ բա-
րեհաճին նախորդ տարիէն մնացեալ պար-
տաց կցելով դիմել նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԴ
Տարեցրջանի բաժնետիրագիրը, եւ հարկ
չը քողոյ մասնաւոր դիմումներու, որով
նոր դժուարութիւն մը պիտի յղան ԱՐՇԱ-
ՒՈՅՈՒ արդէն բազմազարդ Տնօրինութեան:

ՓՐՕ ԱՐՄԵՆԻԱ

Այս է տիտղոսը ֆրանսերէն հանդէսի
մը որ սկսած է հրատարակուիլ Փարիզի մէջ
և որուն առաջին թիւին բովանդակութեան
մէջ ամփոփուած կը գտնենք Օտոնի մէջ:
Այս կարեւոր հանդէսին խմբագրական մար-
մինը կազմուած է ժամանակակից ֆրանսայի
ամենէն նշանաւոր ու տաղանդաւոր գրա-
գէտներէն: Կը բաւէ յիշել անոնց անուն-
ները գաղափար մը տալու համար այն լուրջ
հանգամանքին զոր պիտի ունենայ հանդէ-
սը: Անաթօլ Պրանս — Անդամ ֆրանսական
Ակադեմիոյ և ամենէ հմայիչ արձակագիր-
ներէ մին: Փ՛ Փօնէս — Պրանսական ըն-
կերվարականութեան կառնքը և դարուս ա-
մենէն հոչակաւոր պերճախօսներէն մին,
որ արդէն հայերուն համար իր համակրու-
թեանը, ինչպէս և տաղանդին, չափը տը-
ած է այն գեղեցիկ և ուժգին ճառին մէջ,
զոր Երեսփոխանական Ժողովոյ նիստերէն
մէկուն մէջ արտասանեց Հայկական հար-
ցին առթիւ: Իււպէն Կօհիէ — հեղինակ
Բանակն ընդդէմ Ժողովրդին անուն գրքին,
ուր Զինուորականութեան տխուր պատկերը
կուրուադէք և որ այնքան աղմուկ յա-
րոյց պաշտօնական շրջանակներու մէջ:
Փ. Փրէսանսէ — Թանի, ֆրանսական Ար-
տաքին գործնց նախարարութեան օրկանին,
քաղաքական նախկին խմբագիրը և հիմա
ամենէն տաղանդաւոր և կատարի հակա-
ռակորդներէն մին Մեյիլեան քաղաքակա-
նութեան, որ մարմնացումն է կեղծիքին
և դաւաճութեան: Տը Ռօպերթի — Ռուս
նշանաւոր ընկերաբանը: Ճէյմս Պոսայ — հան-
րածանութեան անգլիացին: և, վերջապէս, Պ.
Փիէճ Բիլիաու — հանդէսին խմբագրապե-
տը: Ազգ. կերպրական վարժարանի ի-
մասապիւրութեան նախկին դասախօսը, և
Պրանսացի արդի գրագէտներուն ամենէն
հանճարեղ ու գողտրիկ գրիչներէն մին: որ

Արեւելքը ճանչնալու առաւելութիւնն ունի
և որուն այս տողերը գրողը իբր իր նախ-
կին աշակերտը՝ պարտք կը համարի որոշ
չըջանակի մը հայերունը երախտագիտական
զգացումներուն արտայայտութիւնը ներկա-
յացնելու այս տողերուն մէջ:
Այս առթիւ, կը փափաքեմ, քանի
մը բառով, կը քննու Պրանսական հանրա-
յին կարծիքին և Հայկական հարցին միջև
վերաբերութիւնները:
Անհրաքելի իրողութիւն մըն է որ Մա-
մուլը, աչքը, քաղաքական ազդու գոր-
ծիքի մը կարեւորութիւնը ստացած է, մաս-
նաւորապէս սահմանադրական և քաղաքա-
կիրթ երկիրներուն մէջ: Ռուսիոյ մէջ և
նոյն իսկ Գերմանիոյ — ուր կառավարական
ձեւը բացարձակ միապետական է, ամէն
ծրագիր մտածին մէջ, կատարեալ գաղտ-
նապահութեան մէջ, կը պատրաստուի, միւս
կողմէն, ժողովրդական կամքի մը կամ
հաւաքական գիտակցութեան մը շարժում-
ները կատարելապէս կը բացակային: Ռու-
սի, հոն Մամուլին քաղաքական դերը իր
անխուսափելի կերպով նուազագոյն բաժ-
նին վերածուած է անհնալակ կարծիքնե-
րէ որ կ'արտայայտուին յաճախ, ուսու-
կան թերթերուն մէջ: Բայց Մեծն-Բրի-
տանիոյ, Պրանսայի և ուրիշ ազատական
երկիրներու մէջ, Մամուլը անհամեմատ
կերպով օգտակար պաշտօն մը կը կատարէ
և իր դերը կը խաղայ, կերպով մը,
կառավարութեան և ժողովրդին միջև, մէկ
կողմէն լուսաբանելով այն խնդիրները — ար-
տաքին ու ներքին — ուր այս վերջինին
կենսական շահերը կամ հայրենիքին ապա-
զան խնդրոյ առարկայ են, կարող ընելու
համար զայն կամ օգնելու համար անոր
ընտրելու իր կամքը ամենէն պատշաճաւոր
կերպով ի գործ դնելու ընդունակ անձեր
երկրին կառավարութեան, և, միւս կող-
մէն, հանրային կարծիքին զգացումներուն
և պահանջումներուն վերահասու ընելով կա-
ռավարութիւնը, որ հաւաքական կամքին
ներկայացուցիչն է արդէն: Սակայն, որ-
քան ալ մեծ ըլլայ Մամուլին ազդեցու-
թիւնը, պէտք չէ կարծել որ, ամէն պա-
րագայի մէջ, կարող ըլլայ կառավարու-
թիւնը մղելու որոշ վճռական արարքներ գոր-
ծելու: Նախ, բազմազոյն ու բազմերես
է Մամուլը, ընդհանուր կերպով, կը պատ-
կերացնէ հանրային կարծիքը, որ, իր
կարգին, տարասեռ ու անհասար կոտո-
րակներէ կը բաղկանայ: Չկայ երկիր մը,
որ բացարձակապէս համաբնոյթ, համերայի,

միակամ, միագոյն հանրային կարծիք մը
գոյութիւն ունենայ մնացում կերպով: Այ-
լապէս, անկարելի պիտի ըլլար բացատ-
րել անթիւ կառավարութիւնները, նախա-
քաղական տապալումները և յաճախակի յա-
ղորդութիւնները: Կատարեալ համաձայնու-
թիւնը վայրկեանակալ է, անմտաբան կուր
ճեղքուած է: Միւս կողմէն, ստոյգ է որ
իրաւունքը զօրութեանն է: մեծպիստու-
թիւնը պարտաւոր է յաղթանակել: Այս-
պէս է որ կառավարութիւն մը — սահմա-
նադրական — կրնայ ընաւ հաշուի չ'առնել
հանրային կամքին անդողջութիւնը: Բայց
սակից չը հետեւի որ հանրային կարծիքը
բողոքովիս առանց ազդեցութեան է կառա-
վարութեանց վրայ: Լորտ Սուլզպրի քըն-
նելով Պօէրական գաւառի առթիւ եւրոպա-
կան միջամտութեան մը պատմահակամու-
թեան դէմ ձեռք առնելիք պաշտպանողա-
կա միջոցներուն անհրաժեշտութիւնը, ըսաւ
որ արդի Եւրոպան օրըստօրէ ռաւակալարա-
կան ուժերուն տիրապետութեան տակ է:
Ազնուական Լորտը ըսել կուզէր անշուշտ
որ, թէպէտեւ պաշտօնական մարմինները
բնազդով կամ խնդրագոյնութեամբ հակա-
ռակ են այդպիսի միջամտութեան մը գա-
ղափարին, սակայն երկիւղը զոր կրնան
ունենալ ժողովրդական անսահման խաւե-
րուն արեւնալից զայրութեան պոթկացող Յե-
ղափոխականութենէն, կրնայ վերջնապէս
զանոնք մղել տարբեր դիրք մը բռնելու:
Ռուսի, ճշդելու համար հանրային կար-
ծիքին իրական դերը — մասնաւորապէս
գային խնդիրներու մասին — կարելի է ը-
սել որ եթէ բաւարար պայման մը չէ ան
կառավարութիւնը գործել տալու, անհրա-
ժեշտ պայման մըն է, ի փոխարէն, առանց
որուն կառավարութիւն մը չը կրնար գործել:
Արդ, Հայ ժողովրդին մէջ տիրող կար-
ծիքն այն է որ Հայկական հարցին լուծումն
Եւրոպական զինեալ միջամտութենէ մը
պէտք է սպասել այնքան, որքան ներքին
կազմակերպեալ ձեւերու լուրջ գործունե-
ութենէ մը: Հետեւաբար, անոնք որ համա-
միտ են տեսնելու այս եղանակին և կը փա-
փաքին որ, մտաւորաւ ապագայի մը մէջ
Հայկական հարցը, առաջին պատեհ առ-
թիւ, միջազգային գիւտնագիտութեան մը
տահոգութեան առնարկայ ըլլայ, գործնա-
կան հողի մը վրայ, պարտականութիւն ու-
նին ստատարելու, բոլոր կարելի միջոցնե-
րով, այն ամէն անհատական կամ հաւա-
քական ձեռնարկներուն, որոնք ազնուօրէն
կը ձգտին Եւրոպական միջամտութեան մը

կարելիութեան միջոցները բազմապատկե-
լու :

Ահա այս կարգի ձեռնարկներուն ամե-
նէն օգտակարն ու ամենէն վսեմն է ֆրո-
Արմենիայի հրատարակութիւնը, որուն աշ-
խատակիցներուն արի ու ազնիւ խմբակը ա-
ռաջագրած ըլլալ կը թուի, իբր Արդա-
րութեան և իրաւունքի վեհոգի մարտիկներ,
չարունակելու պայքարիլ այս անգամ ա-
րիւնչուայ ու ըրեալ Հայաստանին ի նպաստ
և նոր տիրութեան ստանալու Մարդկութեան
և մասնաւորապէս հայ ժողովրդին անկեղծ
երախտագիտութեան :

Քաջակերէնք և բաժանորդագրուինք
ուրեմն այս հանդիսին :

Աղքատագրիւս Ա. Ճ.

ԱՌՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ԱՒԱԶԱԽՈՏ-ՀԱՍՍԱԹ (Կրակեղ)

Շարունակութիւն նախորդ քիւնէ և վերջ

Թրթրնկական աւազախտի գլխաւոր պատ-
ճառները՝ ախտին զանազանութիւնը յատկանը-
չող նկարագրութեան մէջ արդէն յիշուած ըլլա-
լով, աւելորդ կը սեպենք դարձեալ կրկնաբա-
նել :

ԱՌՏԱՆԻՇՔ. — Մէզը քննել բաւական է
աւազախտի գոյութիւնը պայտուցանելու հու-
մար : Կարուբային յատակը կարմիր մրուր տես-
նուած ատեն՝ աւազին միջակայն թթուէ կամ
միջատէ կազմուած ըլլալը կը ցուցնէ : Երբ դիր-
տը ճերմակորակ, գնդակակերպ և խլինքի նեւ
խառնուած ըլլայ, աւազը լուսածնատական է :
Իսկ թուի կամ անգոյն ու պայծառ մրուրը՝ կրա-
յին թրթրնկական յատկանը կը կազմէ : Առաջին
պարագային մէզը թթու է, վերջի եր-
կուքին՝ կալքաբային, զոր կրնանք ճանչնալ
լուսագիւղի թուղթով (քաքիէ սը քուրնըսոյ) :

Աւազախտը երկար ատեն կրնայ յորինուա-
ծին մէջ գոյութիւն ունենալ անանց փոքրիկ
խանգարում մը պատճառելու գործարաններու
պաշտօնավարման : Բայց՝ ընդհանրապէս այս
ախտով վարակուողները խուլ ու թագուն կըն-
կիծներ կ'զգան, որոց կեցողութիւնը երկամուսնի
է, և որք զանազան կողմ կը տարահուին, սա-
կայն սովորաբար միակողմանի են : Երբեմն մի-
զափամփուշտի գրգռոյթ կը պատճառէ և դառ-
նապէս կը նեղէ հիւանդը : Այս ցաւերը, բնա-
սննդառական կանոններէն խոտորելով՝ անբնա-
կան չափազանցութիւններու մէջ ապալլըկիւն
կամ մարմնական բուռն շարժումներ ընկելն
յանկարծ կը պատահին, և որ յաճախ կ'ամո-
քին մաս մը աւազ արտաքսելով : Բացառաբար,
հոգեկանք ու փախուել կրնան պատճառել : մերթ
մէզը արեւնաներկ կ'ըլլայ, և գուն ուրեք հի-
ւանդը արեւն ու թարախ կը միզէ, որ աւելի
միջակայն աւազախտին մէջ նշմարելի են :

Աւազախտը իսկապէս երկարատեւ հիւան-
դութիւն մ'է, որ՝ ժամանակաւոր սփոփումներու
և զայրոյթներու ընդհատ տեսականութեամբ՝
կը շարունակուի, և ատեն ատեն՝ փոխ առ փոխ
կը յաջորդէ յօդացաւութեան և մորթային այ-
լազան բորբոքումներու :

ԴԱՐՄԱՆՔ. — Աւազախտը դարձանելու
համար՝ ի սկզբան կարմիր կամ ճերմակ աւազ-
ախտ ըլլալը գիտնալ անհրաժեշտ է : Արդէն տե-
սանք թէ՛ կարմիր աւազախտը արեան մէջ միջա-
կան թթուէն չափազանց գոյացութեան յառաջ
կուսայ, հետեւաբար ջանալու ենք նախ պակ-
սեցնել այդ թթուէն, սպիտակերպ մարմիններ պա-
րունակող սնունդներու քանակը նուազեցնելով,
որոց՝ անկանոն կամ հեղձամիզուկ չնչառու-
թեամբ, անկատար թթուութեամբ կը խափա-
նէ արեանակազմութիւնը, և միջակայն թթու
յառաջ կը բերէ : Ուստի՝ բացօթեայ կեանքով,
մարմնամարզով, շարունակական պտոյտներով,
օդափոխութեամբ ու ծովային ճամբորդութեամբ
և գնդակակերպ սոցիալական փոփոխութեան է

բորակածնաւոր մարմիններու թթուութեամբ :

Բացարձակապէս սեղանէն վտարելու է մի-
սը, նամանաւանջ տապկուած ու արիւնտ մը-
սերը՝ որ խիստ վնասակար ինչ հաւելիլը, հա-
մեմաւոր կերակուրները, դինին, ոգելից ըմ-
պելիները, ծխախոտը, սուրճը, և թթու ար-
ուեստական օջարակները : Ի մի բան հաստատա-
պէս բուսակեր ըլլալու որոշումը կ'ընելու է,
ներքին համոզմամբ, որոյ արգասիքը անտարա-
կոյս ախտին իսպառ աներեւութացումը պիտի
ըլլայ :

Գարձեալ որոշ է թէ՛ մորթային արտաշն-
չութիւնը յորինուածը կ'ազատէ աւելորդաքա-
նակ աղերէն, ներքին չնչառութեան յոյժ կը
նպաստէ և գործարանաւոր անպէտ ու վնասա-
կար մաշուքներէն մաքրելով արիւնը՝ կը կա-
նոնաւորէ անոր շրջանը : Ուստի, այս կեանա-
կան նպատակը իրականացնելու համար՝ ջրաբու-
ժութեան դիմելու է : Մծմբային, կամ սաք օ-
դով ու շոգիով բաղնիքները, շաքարեղ քիւր-
անգամ մասակարարելի թաց սաւանակալան-
դումը, գիշերը թրջած գոտեպատան (ֆոլիոն
սայսօլինալ) գործածելը, օրն երկու անգամ լեար-
դին վրայ ջնատածութիւն և մէկ անգամ
փորին ու մէջքին վրայ դոյլով ու ժգնօրէն պաղ-
ջրցանութիւն ստանալն ու մարձումը՝ մասնաւոր-
ապէս յանձնարարելի են, որք այս հիւանդու-
թեան կատարեալ դարմանները կրնանք սեպել :
Թթուածնային ներքաշնչումը (ինտրաիոս ս'օֆ-
սիթեկ) միջակայն թթուէն արտադրութիւնը
նշանակելի կերպով կը նուազեցնէ, և մանա-
ւանդ, մեծ դեր կը կատարէ անկողնոյ ծառայող
աւազախտաւորներուն ստացած բորակածնաւոր
նիւթերու թթուութեամբ դիւրացնելու համար :

Արդէն կազմուած աւազին լուծումն ու ար-
տաքումը փոփոխանելու, և հիւանդութիւնը
արմատաջինջ ընելու նպատակով՝ կրնանք նաեւ
գործածել քարալոյժ (լիթոնիթրիթ)՝ մաքրողական
և միջոցաւոր դեղեր, ինչպէս. — 1. թիլի բնած-
խատ (ֆալսօնաք սը լիթիլ) 0, 25-0, 50 հարիւ-
րորդակրամ, դաւաթ մը Սելցի արուեստական
ջուրով՝ օրը մէկ անգամ ննջելու ժամանակ խը-
մել : Լաւագոյն քարալոյժ դեղն է այս : Կամ առ-
նուէլ 40 կրամ աւազախտ (սայսօլին), 250 կրամ ջու-
րով թրջող դեղ (սեֆօսիլ) մինչեւ որ ընդա-
մինը 200 կրամ մնայ : համ տալու չափ շաքար
խառնել, և օրը 5 գաւաթ ջուրով 6-8 կերա-
կուրի դգալ գործածել :

Օգտակար է նաեւ արջախաղողէ (րեգեկ
ս'առն) պատրաստուած (10 առ 100 համեմա-
տութեամբ) թրջոցը : Գոնդրեքսիլիլի և վիշիթի
աղբիւրներէն բղխած անխաղախ ջուրերը կըր-
նան իբր մաքրողական ու միջոցաւոր գործած-
ուելի այս առջին պարագային :

Թրթրնկական աւազախտի դարմանները
չեն տարբերի շատ՝ միջակայնէն : Կարելի եղա-
ծին չափ խոյս տալու է կալքաբային նիւթ
պարունակող մարմիններէն : Աղցան, թթուիչ,
ծնեքիկ, ոսկիխնձոր և թրթրնկական թթու
պարունակող կերակուր երբեք չ'գործածել : Ա-
ռատ ու մաքուր այժի կաթ խմել, և դար-
մանուել արդէն յիշուած ջրաբուժական եղա-
նակներովը :

Լուսածնատական աւազախտը բուժելու հա-
մար՝ հիւանդը մարմնապէս զօրացնելու միջոց-
ները բարւոք կերպիւ ի գործ դնելու, և մաս-
նաւոր ուշադրութիւն ընծայելու է մարտողու-
թեան բարելաւման : Ստամոքին, փորին վա-
րի մասին, ու երկիւմանց վրայ տաք և պաղ
ջուրով՝ մէջ ընդ մէջ մատակարարուած ջնա-
տածութիւնները, արևով բաղնիքները, բա-
ցօղեայ մարզանքը, և անխոով հանդամանքի մը
ստեղծումը՝ այս հիւանդութեան բնական ու փըր-
կարար դարմանները նկատուած են : Ննջելու
ժամանակ եռացած ու պղտած կէս գաւաթ ջու-
րի մէջ 5-8 կաթիլ քլորաջրածնական թթու
(սայսօլինալ) դնելով խմել : այս դեղը կազ-
մուած լուսածնատական աւազը լուծելու և ար-
տաքելու խիստ կը նպաստէ : Պատշաճ եղա-
նակներով և հմուտ անձերու գիտութեամբ կըր-
նան օգտակարապէս գործածուել նաեւ բեւեկնոյ
իսկութիւն (թեթիպիլիթիլ), ռետին (րեգիլ) և
բալասան (պոլ)՝ որք շատ անգամ լաւ ար-
դիւնքներ յառաջ բերած են :

Միզափամփուշտի գրգռումը դադարեցնելու
նպատակով, ամէն օր զով ջուրով տրուած նըս-
տարազնիքները գովաբանութեամբ հոչակուած
են միշտ :

Աւազախտի բոլոր զանազանութեանց ժա-
մանակ զգացուած երկիւմանային խուլ կակիծ-
ները փարատելու համար, ջնատածութեան հետ
կրնանք մատակարարել դարձեալ լուսածնաւոր
(չոսանիթ) ծեփելիք, մէջքին վրայ :

Ելակը, լիմոնը, տանձը, հաղարջը, ա-
նուշ նարինջը և խաղողը կամ չամիչը աւա-
զախտաւորներուն ի նպաստ՝ փորձով օգտակար
ճանչցուած լաւագոյն պտուղներն են, զորս ա-
ռտօրէն ճաշակել վտանգութեամբ կը յանձնա-
րարենք :

Աւազախտի վերեւ յիշատակուած սովորա-
կան և գուն ուրեք տեսնուած ուրիշ մէկ քանի
հիմնովին իրարու ներհակ եղող զանազանու-
թիւնները մէկ դեղով դարմանելու, յիշել կուտայ
մեզ հանգուցեալ բարեյիշատակ Պարոնեանի հրա-
չագործ վարդապետին միւլենոյն ջուրով ամէն
հիւանդութիւններ բժշկելը : Հեթեհաբար կ'ըզ-
գուշացնենք միամիտ ժողովուրդը այս օրինակ
անփորձ հնարամտութիւններէն, և խորագէտ ու
չըջանայեաց ըլլալ կը պատուիրենք :

Վկայեալ Երկարաջրաբոյժ և մարմագէտ
Կ. Գ. ՈՒՉՈՒՆԵԱՆ
Գահիրէ, 21 նոյեմբեր 1900

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բարիկ 10 Դեկտ. — Հօլանտա և Բօր-
թուկալ իրենց դեսպանները ետ կանչած
են :

Լոնտոն 11 Դեկտ. — Ծովակալ Նէլ-
սօնի մատուցած Վրինուիլէն գողցուած
են . այս գողութիւնը մեծ զարոյթ կը
պատճառէ : Գողցուած են ի միջի այլոց եր-
կու թուրի կոթ, ոսկիէ ժամացոյց մը, ու-
սագիրներ և շքանշաններ : Մինակ թուղթի
կտոր մը գտած են գողցուած տեղէն, ո-
րուն վրայ հետեւեալ գրութիւնը կար «Թրա-
փակարի վրէժը» :

Սօֆիա 12 Դեկտ. — Սօպրանիէն լուծ-
ուած է :

Լոնտոն 12 Դեկտ. — Պատերազմական
նախարարութիւնը լուր ընդունած է որ զօ-
րավար Նօքս կը շարունակէ իր կոիւր Տր
Ուէթի հետ և զայն կը հալածէ : Տը Ուէթ
դէպի Բիէթէրսպուրկ կը քայլի ուր արդէն
պատրաստ գունդ մը կայ իր ճամբան կըտ-
րելու համար :

Ս. Բէթէրսպուրկ 12 Դեկտ. — Չարը
ապաքինած է :

Կայսեր բժիշկները որոշած են, կայսե-
րական հիւանդութեան տեղեկագրին հրա-
տարակութիւնը դադարեցնել :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ՄԱԹԱՐԻԱՅԻ կառախուածը եզրպատա-
կան հեծեալազօրքէն ենթասպայ մը կոխո-
տած է, որն որ անմիջապէս հիւանդանոց
փոխադրած են զգայազիրկ վիճակի մէջ :

ԳՕՆՍԹԱՆԹԻՆ Նիֆիթիւ անուն տեղա-
կան հպատակ յոյն մը, որ սիկարէթի գոր-
ծարանի մը մէջ կ'աշխատէր, անցեալ շա-
բաթ անձնասպան եղած է Ռամէլի եր-
կաթուղւոյ գծին վրայ, հրէական գերեզ-
մանատանը մօտ պառկելով ճիշտ այն պա-
հուն, որ կառախուածը Աղքատագրիայէն
չըզեպինդ կը հասնէր, դժբաղդը մարդկը-
տոր կտոր եղած է :

Վրայէն նամակ մը գտնուած է որուն մէջ կ'ըսէ թէ իր անձնասպանութեան պատճառները իմանալ ուզողները թող դիմեն Պ. Ժ. . . ին, սիկարէթի գործարանին Տնօրէնը : Այս պարտնը ոստիկանութեան կողմէն հարցաքննուելով յայտարարած է որ բան մը չ'գիտեր :

ՄՕՀՍԷՆ ՊԷՅ որ Սուլթանի մասնաւոր պատուիրակն է, իր Վեհապետէն հրաման ստացած է Եգիպտոսէն առանձին մեկնիլ, եթէ Տամատ Մահմուտ փաշա մերժէ իրեն ընկերանալ :

Տամատ փաշա մերժած ըլլալով Սուլթանին հրաւերը, Մօհմէտ պէյ առաջի օրը նաև նստած է Պօլիս երթալու համար :

Տանիշ պէյ Տամատ Մահմուտ փաշայի տղոց դաստիարակը, Սուլթանէն իր ներու մը ստացած ըլլալով, երեկ առաւօտ Գահիբէն մեկնած է, որպէսզի վաղուան շոգե-նաւով Պօլիս երթայ :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՄԱՐՈՒՔ. — Վերջերս Գրուբի թնդանօթներու նոր ապագրանք մը հասած է Մէրաքէշ (Մարք) : Թնդանօթները բերուած են Մարտքեան թնդանօթաձիգ խումբէն Խտալացի Կէպէլի հարեւրապետին առաջնորդութեամբ :

Մատրիտի մէջ գէշ աչքով կը նայուի, այս շարունակական սպառազինման վրայ, որ Շէրիֆը Գերմանիոյ գործակցութեամբ կ'ընէ :

Սպանիոյ խորհրդարանը դիտաւորութիւն ունի պետութեանց առաջարկելու որ, զէնքերու և ռազմավթերի այս ներածման վերջ մը տրուի : Որովհետև խորհրդարանը կը նկատէ թէ՛ Մարքի այս ընթացքը Զինաստանի նման Եւրոպայի գլխուն կրնայ նորանոր գոյաբերութիւններ յարուցանել :

ԳՈՒՈՄՊԻԱ. — Քինկսթրնի (Ճամաիք) ճամբով Գօլոնէն հասած հեռագիր մը կ'ըսէ թէ՛ ապստամբները Նոյեմբեր 28 ին Շանկըր քաղաքը գրաւած են : Կառավարութիւնը անմիջապէս 800 զօրք զրկած է

քաղաքը ետ առնելու համար : Կռիւր շատ տար եղած է :

Կառավարական զօրքերը զգալի կորուստներ ունեցեր են, բայց վերջապէս յաջողած են ապստամբները վճռուելու :

Ապստամբները ուրիշ յարձակումներ ըրեր են Գօլոմպիսի և Սապանիլի բերդերուն վրայ : Կառավարութիւնը օգնազօրք կը փութացնէ :

Կը կարծուի թէ՛ ապստամբները պիտի համախմբուին Բանաուայի տեղ Գօլոնի վրայ յարձակելու համար :

Գօլոնի մէջ պաշարման վիճակը հրատարակուած է. շատ մը կասկածելի անձեր ձերբակալուած են :

Ամերիկեան զրահաւոր մը և յաճառարակ մը Գօլոնի դիմաց կը գտնուէին մինչեւ այն օրը, որ հեռագիրը զրկուած է :

ՄԻՍՏԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Կառավարութիւնը վերջապէս յաջողած է Խարբերդի մէջ Ամերիկեան հիւպատոսութիւն մը հաստատել, որուն համար Բ. Գուրը կը մերժէր պաշտօնավարութեան արտօնաթուղթ տալ :

Կ'երևի թէ Գէնըրֆի մարտանաւին ճամբայ ելլելը, վերջապէս այդ խնդրոյն կարգադրութեան ալ մղում տուած է :

ՄԱՐՇԻՄՈՒՆ. — Հէքքեարի լեռնաբնակ նետորական Ասորիներն, որոնք երկուքն աւելի տարիներէ ի վեր այն կողմերու Թուրքերուն հետ գոտուած և ընդհարումները յաճախուէպէս էին, վերջերս հաշտուել են, տեղական իշխանութեան և Մարշիմուսի մէջ համաձայնութիւն գոյացրնելով. տեղական իշխանութիւնք փութացած են հեռագրաւ աւետել հաշտութեան լուրը, առ որ անկ է : Մարշիմուս պատրիարք ալ նմանիմաստ հեռագրով մը ծանուցած է իր ժողովուրդին թրքաց հետ հաշտուած լինեն :

ՌՈՒՍԻԱ ԴԵԿՏ. 1 ին Գերմաններուն յանձնեցին Շանհայ Գուանէն Բէքին երկաւորոջ երկաթուղին. Գերմանական Ընկերութիւնը իր կողմէն Ռուսերուն վճարեց լուր այն ծախքերը, զորս ըրած էին իրենց առժամանակեայ գրաւման միջոցին :

Լի-Հոնկ-ՉԱՆԿ Արքունիքէն հեռա-

գիր մը ստացած է, որով իրեն լուր կը տրուի թէ Եուհիէնի մահը որոշուած է, կամ գլխատուումով և կամ ուրիշ միջոցով : Լի-Հոնկ-Չանկի ընկերացող չըջանակին մէջ կը կարծուի թէ՛ Կայսրը Եուհիէնի մետաքսէ չուան մը պիտի զրկէ, որն որ սովորական եղանակն է մարդու մը ինքնասպանութիւնը հրամայելու :

ՇՍՏ ՄԸ ԼՐԱԳԻՐՆԵՐ ԵՕՏԱՆՆԵՍԱԿՈՒՐԿԷՆ ԴԵԿՏ. 1 թուականով եկած հեռագիր մը կ'արտատպեն, որուն մէջ հետեւեալները կը գտնենք :

Քլէրքստօրքի Պօէր մը որ հոս ձերբակալուած է, կ'ըսէ թէ՛ այդ քաղաքը պարագէս գրաւուած է Պօէրներէն :

Նախագահ Սթէյն և Չօրաւար Տը Ուէթ, ամիս մը առաջ քաղաքը այցելել են : Նախագահը կրակոտ ճառ մը արտասանած է որուն մէջ ըսեր է թէ՛ Պօէրները պատերազմին սկիզբէն ի վեր 1200 կորուստ ունեցեր են, իսկ Անգղիացիները 40,000 : Պուրկըրներէն խնդրած է որ կռիւր առանց դադարի շարունակեն, ծանուցած է նաև անոնց՝ Նախագահ Գրիւէլէրի յեւրոպա ճամբորդութիւնը և ըսած է որ սուտ է այն լուրը թէ՛ Նախագահը իր հետը ազգին պատկանող գումարներ տարած ըլլայ :

Սթէյն ըսեր է նաև թէ՛ ինք Տը Ուէթի հետ Օրանտի մէջ ֆօլմեսսօնէրք պիտի կազմակերպէ և ապա Բարեյուսոյ դաղթաւայրերը պիտի խոժեն, ուր բազմաթիւ Աֆրիքանտէր կուսակիցներ ունին, որոնք պատրաստ են ապստամբելու :

Պ Ձ Պ

Դիւանս պատիւ ունի ծանուցանելու յարգոյ ազգայնոց թէ վաղը, կիրակի, կէս օրէն ետքը, ժամը չորս ու կէսին Տիար Արմենակ Մալուսեան պիտի հաճի փոքր բանախօսութիւն մ'ընել Պազար Մուրուրի Լսարան-Ընթերցատան սրահին մէջ :

Ի դիմաց Մայր Դիւանի Հայ Լսարան Ընթերցատան Ա. Ատենադպիր Ա. Ատենապետ Կ. Գ. ՌԻՉՈՒՆԵԱՆ Ա. ՊԱԼԵԱՆ Գահիրէ 15 Դեկտ. 1900

Թ Ե Ր Թ Օ Ն

2.

Ի Ն Չ ՈՒ Զ Ե Ն Ք Յ Ա Ջ Ո Ղ Ի Ր

ՏԵՍԻԼ Դ.

Արշալոյս թիւ 106 107 112 113 և 115)

Նիստ Գործ . Ժողովոյ

Արդէն շատ ժամանակ անցած էր, եւ Մէնանուսթօլին կից, Հայկական ճարտարապետութեամբ հոյակապ շէնքի մը փառաւոր սրահին մէջ գումարուած ընդհանուր ժողովէն խընդրուած որոշումներն ալ ի գործ դրուած էին, ինչպէս որ ցոյց կուտայ ներկայ տեսարանն :

Գղեակ-Գլիւպը բացուած էր, սա տարբերութեամբ միայն որ Գաղղիական եւ Անգղիական խառնուրդին հետ, խառնուած էր նաև Զինական ու Ճարտարական հրաշալիքներ. այնպէս որ ամէն բան տուրքի կը նշանակուէր, որ պիտի էր վանիլայով քոնեաք, որ թէ՛ քաղցրահամ էր եւ թէ՛ անուշաբոյր :

Զը մոռնանք ըսելու որ՝ զերակատարներու մէջ ալ փոքրիկ փոփոխութիւն մը մտած էր, եւ

այսպէսով սրահին փառքն ալ իւր բարձրութեան գագաթնակէտին հասած էր : Տղեակ նշխարները (հրաւիրատուները) զրուարուած էին. յառաջիկայ կիրակին նուագահանդէս եւ բանախօսութիւն ըլլալու համար որոշում պիտի տրուէր եւ այս կարգադրութեան համար՝ Տնօրէն ժողովը ի նիստ գումարուած էր, հանդիսին փայլունութիւնը գրծելու համար : Եւ անուշաքի վարագոյրը կը բացուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Կը ցաւիմ ըսելու որ մեր յարգոյ ընկերները քանի մը ժամանակէ ի վեր միշտ թոյլ եւ անճշդապահ կը գտնուին, առանց ի նկատի ունենալու թէ՛ մեր պատասխանատուութիւնը հիմակ աւելի ծանր է քան երբէք :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԷՑ. — Այո՛, այս կէտը նըկատողութեան առնելու է, որպէսզի մենք եւս զուր ժամավաճառ չը լինինք, Թաթօեան էֆ. ն պահ մը առաջ խոտացաւ անմիջապէս գալու, եւ դեռ պիտի գայ . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Մանաւանդ Շաթօեան էֆ., որ կարեւոր թուղթեր ալ ունի քովը, ինչպէս նաև նշխարներու հաշիւը :

ԲԱՄՊԱԿԵԱՆ ԷՑ. — Զ'գիտեմ թէ ի՞նչ է այդ տղան քանի ժամանակէ ի վեր է որ շատ խոկուն կ'երեւի, եթէ գալու լինի, շատ ուշ եւ երբեմն ալ բնաւ չի գար. միթէ զժգոհութիւն մը ունի՞ մեզմէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ընդհակառակը շատ գոհ

է՛ ներկայ պատուաւոր ընտրութիւնէն, ինչպէս որ միշտ խօսած է. բայց կը կարծեմ թէ նա մասնաւոր գործ մը ունի, որ զինքը կը զբաղեցնէ . . . :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԷՑ. — Այդ ես ալ նշմարած եմ շատ անգամ իր դէմքին վրայ գոհունակ մըտածումներ եւ երբեմն քաղցր ժպիտներ :

ԲԱՄՊԱԿԵԱՆ ԷՑ. — Կը հասկնամ, նա հիմակ երանելեաց կարգը դասուած է . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — (Յուզուած) Վայ Շաթօեան վա՛յ, այսպէս հէ՛, ես ալ կը զարմանամ իւր օրական քանի մը անգամ փոփոխուելուն վրայ. արդեօք գերազանցե՛լ կուզէ . . . :

ԲԱՄՊԱԿԵԱՆ ԷՑ. — Կը հասկնամ՝ որ դուք ալ յուզուեցաք, խէր ըլլայ. (Թաթօեան ներս մտած լինելով, խէր է, խէր է ինչալլահ, բարեկուն ձեզ) :

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԷՑ. — Չեր անակնկալ խէր ըսելուն մէջ կը կարծենք հաւատալ որ դուք խընդրը կրնաք լուսարմենի, Շաթօեան ինչո՞ւ համար Զէյթուն կամ Մաթարիա կ'երթայ կուգայ . . . :

ԹԱԹՕԵԱՆ. — Նաքը օլուր. ինչպէս ըսեմ. այո, կարծեմ թէ լսեցի, մի ողբերգութեան կամ կատակերգութեան խնդրոյ առթիւ է . . . :

(Շարունակելի)

